ՄԻՋԱԴԵՊ

# ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ, ՍԱԴՐԱՆՔ, ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ՆԵՐԽՈՒԺԵԼՈՒ ՓՈՐՁ, ԲԱԽՈՒՄՆԵՐ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ինչեւիցե, երկրի օրենսդիր մամնի ղեկավարի բազկաթոռին Գավրիլովի հայտնվելու եւ հավաքվածներին անգլերենի փոխարեն ռուսերենով դիմելու հանգամանքը դարձավ վրաց պատվիրակության ընդվզման պատճառ, ինչը վերածվեց ընդհանուր բողոքի՝ ինչպես խորհրդարանի շենքում, այնպես էլ կարճ ժամանակ անց՝ նրա սահմաններից դուրս: Բնականաբար, նման պայմաններում վեհաժողովի աշխատանքը փլուզվեց, ռուս պատգամավորները, իրավապահների ուղեկցությամբ, թողեցին նիստերի դահլիճը: Դահլիճից հեռացան նաեւ վեհաժողովի մյուս մասնակից պատվիրակությունները, որոնց մեծամասնությունը կիսում էր վրաց գործընկերների վրդովմունքը:

Նշենք, որ կառավարող կուսակցության ներկայացիչները եւս իրենց վրդովմունքը հայտնեցին տեղի ունեցածի առիթով, պաշտպանեցին նման կարգով վեհաժողովի անցկացման անթույլատրելիությունը:

Վեհաժողովի աշխատանքի ընդհատումը եւ ռուս մասնակիցների հեռանալը է՛լ ավելի բորբոքեց կրքերը: Բողոքի մասնակիցները բարձրացրին ռուս պատվիրակներին հրավիրելու անհեռատես որոշման հեղինակների, իշխանության մյուս ներկայացուցիչների մասնավորապես, խորհրդարանի խոսնակ Իրակլի Կոբախիձեի, ՆԳ նախարար Գիորգի Գախարիայի, անվտանգության ծառայության ղեկավար Վախթանգ Գոմելաուրու պատասխանատվության եւ պաշտոնաթողության հարցը: Ցույցին մասնակից ինչպես խորհրդարանական, այնպես էլ՝ ոչ խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունները բարձրացրին նաեւ խորհրդարանական արտահերթ ընտրությունների անցկացման հարցը, ընդ որում հատուկ նշելով, որ նոր ընտրությունները, բացառելով մեծամասնական ընտրակարգը, պետք է անցկացվեն միայն համամասնական ընտրակարգով:

Տեղի ունեցած միջադեպի դատապարտմամբ հանդես եկան Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, երկրի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին, կուսակցության քաղխորհրդի նախագահ, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, Վրաստանի ժողովրդական պաշտպան Նինո Լոմջարիան, ուրիշներ:

### «ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԿԻՍՈՒՄ ԵԵՔ ՄԵՐ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ»



«Ամբողջովին կիսում եմ մեր համաքաղաքացիների անկեղծ մտահոգությունը խորհրդարանում զարգացած իրադարձությունների վերաբերյալ: Անընդունելի է, որ Վրաստանի խորհրդարանում օկուպանտ երկրի ներկայացուցիչն է ղեկավարում վեհաժողովը: Ինձ հայտնել են, թե արարողակարգային սխալ է եղել, որի քաղաքական կարեւորությունը, ցավոք, կազմակերպիչները հաշվի չեն առել: Սակայն տեղի ունեցածը, անպայման, համապատասխան արձագանքի կարժանանա: Ես արդեն խոսել եմ խորհրդարանի խոսնակի հետ, իմ կտրուկ դիրքորոշումն եմ հայտնել նրան եւ, իհարկե, խորհուրդ եմ տվել՝ անհապաղ դադարեցնել նիստը»:

### «ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔՆ ԱՐԴԱՐ Է ԵՎ ՀԱՍԿԱՆԱԼԻ»



- Դժվար է տեսնել, որ Վրաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի գլխավոր ամբիոնից ելույթ է ունենում օկուպանտ երկրի պատգամավոր: Այս փաստը վնաս է հասցնում մեր ազատության գաղափարին, վնասում է վրաց պառլամենտարիզմին: Ամբողջովին կիսում եմ վրաց հասարակության արդար բողոքը եւ դիմում եմ կազմակերպիչներին՝ անհապաղ բացատրել հասարակությանը տեղի ունեցածը եւ խիստ արձագանքել,- լրագրողների հետ հանդիպմանը ասաց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն:

Լուսադեմին, երկրի խորհրդարանի շենքի մոտ տեղի ունեցած միջադեպից անմիջապես հետո, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, հատուկ հրավիրված մամլո ասուլիսում, հայտարարեց, որ տեղի ունեցածը կառավարող թիմի բոլոր անդամների, ինչպես եւ երկրի յուրաքանչյուր քաղաքացու համար շատ ցավալի է եւ անընդունելի: Վարչապետի խոսքով, տվյալ պարագայում ոստիկանությունը գործել է օրենքի շրջանակներում, պաշտպանել պետությունը, հասարակությանը եւ կանխել իրավախախտումը:

Վարչապետի խոսքով, Ռուսթավելու պողոտայում ժողովրդի օրինական բողոքը օգտագործեցին ապակառուցողական քաղաքական ուժերը՝ «Միասնական ազգային շարժումը», «Եվրոպական Վրաստանը» եւ դուրս եկան Սահմանադրության շրջանակներից:

«Իրադրությունը, որը ստեղծվել էր մեր թիմի առանձին անդամների ծանր սխալների հետեւանքով, ինչը մեր համաքաղաքացիների անկեղծ բողոքի պատճառ դարձավ, օրվա առաջին կեսին ամբողջությամբ կարգավորվեց մեր քաղաքական թիմի կողմից. դադարեցվեց ուղղափառության միջազգային համաժողովը, ռուսական պատվիրակությունը լքեց երկիրը, մեր թիմի ղեկավարներն արեցին համապատասխան հայտարարություններ եւ հայտնեցին, որ հանգամանորեն կուսումնասիրեն տեղի ունեցած ամեն ինչ, եւ պատասխանատվություն կպահանջեն թիմի անդամներից:

Հենց այդ ժամանակ Ռուսթավելու պողոտայում բնակչության բողոքից օգտվել են ապակառուցողական քաղաքական ուժերը՝ «Ազգայնականները», «Եվրոպական Վրաստանը» եւ դուրս եկել սահմանադրական շրջանակից: Ռեւանշիստական ընդդիմադիրների կողմից տեղ է գտել խմբային բռնության կազմակերպում, այդ թվում՝ փորձել են ներխուժել խորհրդարանի շենք, գրոհ են կազմակերպել խորհրդարանի վրա, եւ դա բոլորը տեսել են ուղիղ եթերով, ինչպես նաեւ բոլորը տեսել են, թե ինչպես են նրանք բռնություն գործել ոստիկանների հանդեպ: Արդյունքում ստեղծվել է իրավիճակ, որը դուրս է եկել օրվա առաջին կեսին տեղի ունեցող ցույցի նպատակից եւ ստացել ենք ռեւանշիստական, ապակառուցողական բռնություն:

Ցավոք, անպատասխանատու ընդդիմության գործողությունների արդյունքում տուժել են մեր քաղաքացիները. ինչպես գործողության մասնակիցները, այնպես էլ իրավապահները: Մինչեւ վերջին պահը ոստիկանությունը չի լքել խորհրդարանի տարածքը: Ոստիկանությունը օգտագործել է օրենքով սահմանված միջոցներ»,- իր խոսքում ընդգծեց Մամուկա Բախտաձեն եւ հավելեց, որ այս պահին կարեւոր է տուժածների առողջական վիճակը եւ դա հիմնական հոգսն է:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՀԱՅՏՆԻ ԱՆՈՒՆՆԵՐ

# ԱՆՈՒՆ՝ «ԳԱՅԱՆԵ» ՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

Ընդգծենք, որ մեծ նկարչուհու գործերին բնորոշ են հանդիսավորությունը, տոնականությունը, թատերականությունը: Գույների հրավառությամբ ու վառ երանգների համադրությամբ գրավիչ աշխատանքների կողքին դիտողի աչքից չեն վրիպում խամրած վրձնահարվածները, որոնք ասես թե նրա անձնական կյանքի շտրիխներն են խորհրդանշում...

Գայանեի գրեթե բոլոր գործերում առկա են ճախրող ձիեր, պարուհիներ, աճպարարներ, ծաղրածուներ, դիմակներ, թատերական տեսարաններ... Իմիջիայլոց, շատերը չգիտեն, որ Գայանեն արարելու ժամանակ դնդնում էր եվրոպական աշխարհահռչակ օպերաներից արիաներ կամ՝ հատվածներ պատարագից, կամ էլ՝ լսում էր դասական երաժշտություն: Հետաքրքիր է նշել, որ տոն օրերին նա իր ուրախությունն առանձնակիորեն արտահայտում էր նկարելով:

Բնականաբար, նկարչուհու ստեղծագործականության վրա իր անջնջելի ձեռագիրն է թողել այն քաղաքը, որի գրկում ապրել ու հրաշագործել է արվեստագետը: Ինչպես հաճախ ինքն էր կրկնում, հենց կոլորիտային ու խայտաբղետ Թիֆլիսն էր նրա մուսան ու արարչագործության սնուցող ակունքը. «Սա ինձ համար քաղաք չէ, սա ինձ համար թատրոն է, գեղանկարչական թատրոն»:

Հանճարեղ Սերգեյ Փարաջանովը մի առիթով այսպես է բնութագրել Գայանեի կապվածությունը քաղաքին. «Եթե դուք չեք տեսել Գայանեի աշխատանքները, նշանակում է՝ ոչինչ չգիտեք Թիֆլիսի մասին»: Իսկ Գայանեի ծանոթությունը Սերգեյ Փարաջանովի հետ սկսվել է այն ժամանակ, երբ նկարչուհին ընդամենը 23-24 տարեկան էր: Ինչպես տեղեկանում ենք Գայանեի կենսագրությունից, նրանց մտերմությունը շարունակվել է ողջ կյանքի ընթացքում, քանի որ բացառիկ տաղանդի տեր այս անհատականությունները հոգով հարազատ էին միմյանց: Դրա համար էլ պատահական չէր, որ Փարաջանովի նախաձեռնությամբ կազմակերպվեց Գայանեի առաջին ոչ պաշտոնական ցուցահանդեսը Երեւանում: Մեծ կինոռեժիսորը Գայանեին համարել է 20-րդ դարի երկրորդ կեսի ամենահիմաստալից նկարչուհին եւ բնորոշել իբրեւ շամանուհի (կախարդուհի), պատգամախոս, գույնի ու ճկունության մունետիկ: Այդուհետ, 70-ականներին Երեւանում արդեն պաշտոնապես է կազմակերպվում նկարչուհու աշխատանքների ցուցադրությունը, որտեղ նրան առաջարկում են վաճառել մի քանի նկար: Այդ նկարները տեղ են գտել Հայաստանի ազգային պատկերասրահի ու ժամանակակից արվեստի թանգարանի մշտական ցուցադրություններում:

Ճիշտ է, Գայանեն ստացել էր ռուսական կրթություն եւ գրական հայերենին վարժ չէր տիրապետում, սակայն հայախոս ընկերներին խնդրում էր իր հետ շփվել միմիայն հայերեն: Նա խորապես զգում էր այդ արքայական լեզվի գեղեցկությունն ու ճոխությունը: Ասենք նաեւ, որ հատկապես 90-ական թվականներից մինչեւ կյանքի վերջ նա հաճախ է շրջագայել Հայաստանում:

Գայանեն Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի միշտ սպասված հյուր-հանդիսատեսն էր: Ներկայացումներից մեկի ժամանակ՝ 1988-ին «Եռաձայն պատարագը» դիտելիս հիանում է դերասանուհի Մելանյա Բարսեղյանի խաղով ու ծանոթանում նրա հետ: Այնուհետեւ Մելանյա Բարսեղյանն ու նրա ամուսինը՝ նույն թատրոնի ռեժիսոր, դերասան Ռոման Մատիաշվիլին դառնում են այն եզակի ամենամտերիմ ու կարեւոր մարդիկ, առանց որոնց դժվար է պատկերացնել Գայանեի անձնական կյանքը: Այսօր էլ, այդ գեղեցիկ զույգը շարունակում է մեծ գորովով ու երկյուղածությամբ վառ պահել մեր ժամանակների մեծանուն գեղանկարչուհու հիշատակն ու տան ճրագը՝ նրա երկրային կյանքից հետո դառնալով գայանեական շարունակության յուրատեսակ ներկայությունը: Ավելին, Մելանյա եւ Ռոման ամուսինները նախատեսում են մոտ ապագայում նկարչուհու վերջին տարիների ապրած Իսանիի թաղամասի Ճրելաշվիլու փողոցի բնակարան-արվեստանոցը, որը նկարչուհուն տրամադրել էր Վրաստանի կառավարությունը, վերածել հուշատան:

Գայանեն թիֆլիսյան նկարչական «շկոլայի» փայլուն ներկայացուցիչն է, ով ժառանգություն է թողել 700 գեղանկարչական ու գրաֆիկական աշխատանքներ, որոնք պահվում են աշխարհի լավագույն թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում: Տարբեր տարիներին դրանք ցուցադրվել են Մոսկվայում, Փարիզում, Լիսաբոնում, Իտալիայում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում: Փարիզյան ցուցահանդեսի ժամանակ ֆրանսիացի խոշոր նկարիչ Մարկ Շագալը հիացմունքով բացականչել է. «Գայանե Խաչատրյանը առաջ է անցել մյուս նկարիչներից 100 տարով ու Նա անհասանելի է»:

Չմոռանանք ավելացնել, որ շնորհաշատ նկարչուհու մասին «Հայֆիլմ» կինոստուդիայում երկու ֆիլմ է նկարահանվել. ճանաչված կինոբեմադրիչներ Յուրի Երզնկյանի «Գայանե» (1971) եւ Ռուբեն Գեւորգյանի «Երկնագույն քամի, նշի բույրը» (1978) վավերագրական ֆիլմերը: 2006 թվականին ստեղծվել է Կորա Ծերեթելիի եւ Լեւոն Գրիգորյանի «Ես՝ թիֆլիսցի Գայանեն» կենսագրական, իսկ 2009-ին՝ Լեւոն Գրիգորյանի «Կղզի՝ Գայանե Խաչատրյան» վերնագրով փաստավավերագրական կինոնկարները:

2009 թվականին Թբիլիսիի հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում, Հովհ.Թումանյանի, Րաֆֆու, Գ.Սունդուկյանի շիրիմների կողքին ավելացավ եւս մի նոր տապանաքար՝ Գայանե մակագրությամբ: Անուն, որը քաջ հայտնի է ամբողջ աշխարհի արվեստասեր հասարակայնությանը, անուն, որ իր ստեղծագործական նոր աշխարհով հարստացնում է համամարդկային մշակույթի գանձարանը:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՄԻՋԱԴԵՊ

# ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ, ՍԱԴՐԱՆՔ, ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ՆԵՐԽՈՒԺԵԼՈՒ ՓՈՐՁ, ԲԱԽՈՒՄՆԵՐ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

## «ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ Ի՞ՆՉ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՄԵՐ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ»



«Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողով: Ի՞նչ է դա նշանակում: Ուղղափառական ի՞նչ միություն կարող է գոյություն ունենալ մեր եւ երկրի միջեւ, որը ոչ միայն մեր տարածքների բռնազավթիչն է, այլեւ՝ պայքարում է կրոնի, քրիստոնեական բոլոր կարգերի դեմ: Նրանք երկու օր առաջ Գերմիսխեւիում արգելեցին վրացիների եւ օսերի համատեղ աղոթքը, հարազատների շիրիմներին այցելելը, Աբխազիայում վրացական եկեղեցու վերականգնմանը: Տվյալ պարագայում ուղղափառություն չկա: Ռուսաստանի համար դա քաղաքական նպատակներով կրոնի օգտագործման սովորական միջոցն է: Եթե այդպես է, ապա մենք ինչո՞ւ ենք խաղում այդ քաղաքական խաղը»:

Արձագանքելով, Ռուսթավելու պողոտայում ոստիկանության եւ ցուցարարների միջեւ տեղի ունեցած բախումներին, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հայտարարեց. «Այսօր տեղի ունեցածը մեծագույն հանցագործություն էր, սակայն դա որեւէ կերպ չի արդարացնում արհեստական ալիքը, հակակառավարական գործողությունները, որոնք ուղղված էին խորհրդարան ներխուժելուն եւ Կառավարությունը տապալելուն: Ռուսաստանը մեր թշնամին է: Նրա կողմից ղեկավարվող հինգերորդ շարասյունը կարող է ավելի վտանգավոր լինել, քան բացահայտ ագրեսիան»,- այս մասին հայտարարեց պաշտոնական այցով Բելոռուսում գտնվող Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին եւ հավելեց. «Ես կցանկանայի մեկ անգամ եւս նշել, որ երկրի եւ հասարակության պառակտումը, բացի Ռուսաստանից որեւէ մեկին պետք չէ: Ռուսաստանն այսօր կիրառեց իր ամենափորձված զենքերից մեկը»:

## «ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾԸ ՄԵԾ ՀԱՐՎԱԾ Է ՄԵՐ ԹԻՄԻՆ»



«Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն ներողություն խնդրեց ժողովրդից եւ նշեց, որ տեղի ունեցածը մեծ հարված էր «Վրացական երազանքի» թիմին: Նրա խոսքով, լրիվությամբ կիսելով ժողովրդի արդարացի բողոքը, ինքը չի կարող համաձայնվել ընդդիմադիր առանձին գործիչների կողմից միջադեպը շահարկելու միտման հետ: «Տեղի ունեցածի համար մեղավորները պատասխանատվության կենթարկվեն: Դա վերաբերում է ինչպես թերացում թույլ տված մեր թիմակիցներին, այնպես էլ ընդդիմության՝ ծայրահեղության կոչեր անող գործիչներին»:

## «ԲՈՂՈՔԸ ԱՐԴԱՐԱՑԻ Է, ՍԱԿԱՅՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ»



«Հասարակության բողոքն ու մտահոգությունը արդարացի է, սակայն բռնությունը՝ անընդունելի: Հիշեցնում եմ ցույցի մասնակիցներին, որ բողոքի ընթացքում բռնությունը դուրս է գալիս հավաքների եւ խոսքի արտահայտման ազատության շրջանակներից: Իշխանություններին կոչ եմ անում ձեռնարկել համապատասխան քայլեր եւ ժամանակին բացահայտել պատասխանատու անձանց, որպեսզի խուսափենք դիմակայությունից»:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ



Ցուցարարներին հանգստության եւ զսպվածության կոչով դիմեց նաեւ Վրաստանի ներքին գործերի նախարարությունը: Գերատեսչությունը ցուցարարներին զգուշացրեց պետական հաստատությունները, մասնավորապես, խորհրդարանի շենքը բռնությամբ զբաղեցնելու փորձից եւ խորհուրդ տվեց գործել գործող օրենսդրության սահմաններում:

Չնայած զգուշացումներին, ցուցարարները, ոգեշնչված ընդդիմադիր առանձին լիդերների կոչերով, հունիսի 20-ի գիշերը, որոշեցին ներխուժել խորհրդարանի շենք, ինչը իրավապահ մարմիններ կողմից ցույցի ցրման համապատասխան ուժի եւ տեխնիկական միջոցների կիրառման պատճառ դարձավ:

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, խորհրդարանի շենքի դիմաց իրադարձությունների, ցուցարարներին ցրելու առնչությամբ, պաշտոնական հայտարարություն տարածեց, ուր, մասնավորապես, ասված է.



«Ինչպես հանրությունը տեսավ, խորհրդարանի հարակից տարածքում ծավալված ակցիան դուրս եկավ ազատ արտահայտման եւ օրենքով սահմանված խաղաղ հավաքի շրջանակներից եւ բռնի բնույթ ստացավ: Չնայած նախարարության կողմից արված կոչերի, ակցիայի մասնակիցները շարունակում էին խորհրդարան ներխուժելու փորձերը, ոստիկանությանը չենթարկվելն ու վերջիններիս հանդեպ բռնության կիրառումը: Համապատասխանաբար, խորհրդարանի շենք ներխուժելու, քաղաքացիների եւ ոստիկանների առողջությանը վնասելու եւ ֆիզիկական բախումներից զերծ մնալու նպատակով, ոստիկանությունը կիրառել է օրենքով սահմանված հատուկ միջոցներ:

Դրա հետ մեկտեղ, Ներքին գործերի նախարարությունը համապատասխան իրավական գնահատական կտա զանգվածային խառնաշփոթ կազմակերպելու եւ խորհրդարանի շենք ներխուժելու փորձի հետ կապված: Իրավախախտման եւ հանցագործության յուրաքանչյուր փաստով նախարարությունն արձագանք կիրապարակի»,- նշված է ՆԳ հայտարարության մեջ:

Ոստիկանությունը հանրահավաքի մասնակիցների դեմ կիրառել է ջրանետներ, ռետինե փամփուշտներ եւ արցունքաբեր գազ: Բողոքի ցույցի ցրման գործողության արդյունքում, ինչպես տեղեկացրել է Վրաստանի առողջապահության նախարարությունը, տուժել է 52 մարդ, այդ թվում՝ 38 ոստիկան: Բերման է ենթարկվել մի քանի տասնյակ մարդ:

Ընդդիմությունը պատահածի մեջ մեղադրում է իշխանություններին: Կառավարությունը, իր հերթին, ընդդիմախոսներին մեղադրում է պառակտությունը բորբոքելու մեջ:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ. «ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՑՈՒՅՑԸ ԱՅԼ ԲՆՈՒՅԹ Է ՍՏԱՑԵԼ»

Տեղի ունեցածին արձագանքեց նաեւ Վրաստանի պատրիարքարանը. «Այսօր խորհրդարանում տեղի ունեցած հայտնի իրադարձությունները հասարակության շրջանում առաջացրել են արդար բողոք, քանզի բոլորին հուզում է մեր տարածքների բռնազավթումը:

Ցավոք, խորհրդարանի մոտ տեղի ունեցած ցույցը արդեն ստացել է այլ բնույթ:

Կոչ ենք անում իշխանություններին, առավելագույնս զուսպ գործել ժողովրդի դեմ եւ ձեռնպահ մնալ բռնության դրսեւորումներից: Կոչ ենք անում բնակչությանը՝ ցուցաբերել հանգստություն, եւ չենթարկվել էմոցիոնալ ֆոնին: Կոչ ենք անում կուսակցություններին, անկախ քաղաքական հայացքներից, կոչ ենք անում լրագրողներին, դիվանագետներին, բնակչությանը, հնարավորինս հանդարտացնել իրավիճակը, եւ երկիրը չկանգնեցնել մեծ վտանգի առջեւ»:

## ԸՆԴՀԱՏԵՑԻՆ ԱՅՑԵՐՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ԹԲԻԼԻՍԻ

Տեղի ունեցածի կապակցությամբ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ընդհատեց իր այցը Բելոռուս, որտեղ մասնակցելու էր Համաեվրոպական մարզական խաղերի բացմանը: Իր պաշտոնական այցը Բաքու ընդհատեց նաեւ Վրաստանի խոհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

## ԲԵՐՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ 305 ՑՈՒՑԱՐԱՐ, ԲԱԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՏՈՒԺԵԼ Է 240 ՄԱՐԴ

Վրաստանի ՆԳ նախարարության տեղեկատվությամբ, հունիսի 20-21-ին, երկրի խորհրդարանի շենքի մոտ բողոքի ակցիաների ընթացքում, բերման է ենթարկվել 305 ցուցարար: Ինչպես հայտնեց գերատեսչության փոխղեկավար Վլադիմիր Բորցվաձեն. «Ակցիայի մասնակիցների ագրեսիվ մասը ողջ գիշերվա ընթացքում շարունակում էր իրավախախտել: Լուսաբացին նրանք վնասել են ոստիկանական ու քաղաքացիական ավտոմեքենաներ եւ ավերածություններ գործել հարակից տարածքի մասնավոր օբյեկտներում: Տարբեր իրավախախտումների համար բերման է ենթարկվել ակցիայի 305 մասնակից»,- ասաց նա:

Ինչ վերաբերում է տուժյալներին, ապա Վրաստանի առողջապահության փոխնախարար Զազա Բոխուայի խոսքով, հունիսի 20-ին, Թբիլիսիում տեղի ունեցած բողոքի ակցիաների ընթացքում, տուժել է 2400 մարդ, նրանցից 102-ը մնում են բժշկական հաստատություններում:

Ըստ Բոխուայի՝ տուժածներից 80-ը ոստիկաններ են: Այժմ վիրաբույժները վիրահատում են երկու վիրավորի: Տուժածներից մեկի վիճակը կայուն ծանր է:

## ՀԱՆՐԱՀԱՎԱՔԸ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՊՈՂՈՏԱՅՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է...

Չնայած տեղի ունեցած երկուստեք գործողությունների, Վրաստանի ընդդիմադիր առանձին կուսակցություններ, մասնավորապես, «Միասնական ազգային շարժումը», «Եվրոպական Վրաստանը» «Հաղթող Վրաստանը» եւ մյուսները երկրի քաղաքացիներին կոչ արեցին շարունակել բողոքի գործողությունները եւ կրկին հավաքվել Ռուսթավելու պողոտայում՝ իրենց պահանջները կառավարությանը ներկայացնելու համար:

Նշենք, որ «Վրաստան» թերթի տվյալ համարի պատրաստմանը զուգահեռ, Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայում, շարունակվում է բազմամարդ հանրահավաքը: Հատկանշական է այն հանգամանքը, որ ընդդիմադիր հանրահավաքը կազմակերպած կուսակցություններից եւ ոչ մի ղեկավար, համենայնդեպս, մինչեւ ժամը 21:00, բարձրախոսին չի մոտեցել, չի ներկայացրել հետագա գործողությունների ծրագիրը:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԲԱՐՁՐԱՑՎԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ

*Հունիսի 18-ին անցկացվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը: Նիստի աշխատանքին մասնակցեցին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, պաշտոնատար այլ անձինք:*

Իր խոսքում վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվելիք աշխատանքներում բարեգործության նոր ընկալման անհրաժեշտություն է տեսնում: «Եթե մենք մարդկանց օժտում ենք նյութով, բայց չենք օժտում հմտություններով, մենք ոչնչով այդ մարդուն չենք օգնում: Նրա խնդիրները տրանսֆորմացնում ենք մի կարգից մյուսը: Եթե աշխատանքի խրախուսումը, հմտության օժտումը եւ կրթության խրախուսումը այս ընդհանուր ծրագրերի մեջ կարեւոր կոմպոնենտ չի կազմում, ապա մենք, ըստ էության, երբեմն չենք կարողանում հարցերը լուծել անհրաժեշտ մակարդակի վրա: Այնպես որ, բովանդակությունը բոլոր դեպքերում պետք է լինի առաջնային»,- ասաց Փաշինյանը:

Վարչապետը «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին կոչ արեց քննարկել համահայկական բյուջե ստեղծելու գաղափարը, նշելով, որ համահայկական բյուջե ստեղծելով հնարավոր կլինի այս գործընթացում ապահովել աշխարհում յուրաքանչյուր հայի ներգրավվածությունը, ինչն էլ հայապահպանման խթան կհանդիսանա:

«Մենք ունենք ներուժ, երազանքներ, ցանկություններ, բայց չունենք դրանք կյանքի կոչելու գործիք, հետեւաբար համահայկական բյուջեի տրամաբանությունը ես կառաջարկեի, որ որեւէ ձեւով քննարկվեր»,- ասաց Փաշինյանը:

## ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ



*Հունիսի 17-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալ Գաբրիելա Բատաինի-Դրագոնիի գլխավորած պատվիրակության հետ:*

Հյուրը Հայաստանի վարչապետին փոխանցեց ԵԽ գլխավոր քարտուղար Թյորբյորն Յագլանդի ջերմ ողջույններն ու պատրաստակամությունը՝ աջակցելու դատաիրավական համակարգի բարեփոխումների իրականացմանը: ԵԽ գլխավոր քարտուղարի տեղակալն անդրադարձավ Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2019-2022թթ. Գործողությունների ծրագրին, որի պաշտոնական մեկնարկի արարողությունը կայացել է հունիսի 17-ին: Գաբրիելա Բատաինի-Դրագոնին վարչապետին ներկայացրեց ծրագրի ուղղությունները՝ նշելով, որ Եվրոպայի խորհուրդը պատրաստակամ է սերտ համագործակցության տարբեր ուղղություններով Հայաստանի իշխանությունների նախաձեռնած բարեփոխումները կյանքի կոչելու գործում:

Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձան նաեւ Հայաստանի ընտրական համակարգի բարեփոխումներին, այդ ուղղությամբ նախատեսվող քայլերին եւ ժողովրդավարական բարեփոխումների օրակարգի այլ հարցերի:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ



*Հունիսի 20-ին, աշխատանքային այցով, Վաշինգտոնում գտնվող Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է ԱՄՆ-ի նախագահի անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնի հետ:*

Հանդիպման սկզբում զրուցակիցներն անդրադարձել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ եւ մասնակցությամբ կայանալիք Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպմանը:

ԱՄՆ նախագահի խորհրդականը եւ Հայաստանի ԱԳ նախարարն անդրադարձել են տարածաշրջանային խաղաղության եւ անվտանգության օրակարգային հարցերին:

Զրուցակիցները հանդես են եկել հայ-ամերիկյան երկկողմ համագործակցության օրակարգն ընդլայնելու եւ խորացնելու պատրաստակամությամբ:

Վաշինգտոնում կայացել է նաեւ Զոհրաբ Մնացականյանի հանդիպումը ԱՄՆ պետքարտուղարի քաղաքական հարցերով տեղակալ Դեյվիդ Հեյլի հետ:

Հայաստանի ԱԳ նախարարը եւ ԱՄՆ պետքարտուղարի հանդիպմանը կողմերը քննարկել են միջազգային եւ տարածաշրջանային մի շարք արդիական հարցեր:

## ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 20-21-ը, Վաշինգտոնում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ, անցկացվեց Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Զոհրաբ Մնացականյանի եւ Էլմար Մամեդյարովի հանդիպումը: Հանդիպման ավարտին, կողմերը հանդես են եկել հայտարարությամբ:*

Հայտարարության մեջ նշվում է, որ հանդիպման մասնակիցները քննարկել են ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում վերջին զարգացումներն ու հիմնական հարցերը:

Ափսոսանքով ընդգծելով վերջին կորուստները՝ համանախագահները կողմերին կոչ են արել ձեռնարկել անհապաղ միջոցներ՝ խաղաղությանը եւ առարկայական բանակցություններին նպաստող մթնոլորտի վերականգնման ուղղությամբ: Համանախագահները կողմերին կոչ են արել վերահաստատել հանձնառությունը՝ անշեղորեն պահպանել հրադադարը:

Արտգործնախարարները պայմանավորվել են մոտ ապագայում կրկին հանդիպել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո:

### ՀԱՏՈՒԿ ՄՐՑԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

***Աշխատանքային այցով Փարիզում գտնվող Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը հունիսի 18-ին մասնակցեց Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) 2019թ. Համաշխարհային համաժողովին: Երեք տարին մեկ անցկացվող այս համաժողովը ԱՃԹՆ-ի 52 անդամ երկրների եւ արդյունահանող ոլորտի շահառուների համար բացառիկ հարթակ է՝ բնագավառի կառավարման եւ ԱՃԹՆ-ի ազդեցության հետ կապված բազմաբովանդակ քննարկումների համար: 52 երկրների շարքում Հայաստանը եւ եւս երկու պետություններ ԱՃԹՆ Համաշխարհային համաժողովի ժամանակ արժանացան ԱՃԹՆ-ի նախագահության մրցանակի:***

### ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ



***Հայաստանի Ազգային ժողովը գաղտնի քվեարկությամբ երկրի Սահմանադրական դատարանի դատավոր ընտրեց Վահե Գրիգորյանին: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանը հայտարարեց, որ գաղտնի քվեարկությանը մասնակցել է 122 պատգամավոր: Մեկ քվեաթերթիկ անվավեր է ճանաչվել: Վահե Գրիգորյանի թեկնածությանը կողմ է քվեարկել 99, դեմ՝ 22 պատգամավոր:***

### 40 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՄՆ-ԻՑ

***ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը հաստատել է Հայաստանին 40 միլիոն դոլարի հավելյալ աջակցություն տրամադրելու նախաձեռնությունը. Հայաստանին 40 միլիոն դոլարի աջակցություն տրամադրելու նախաձեռնությամբ հանդես էր եկել Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ջեքի Սփեյերը: Նախագծին կողմ է քվեարկել 268, դեմ՝ 152 կոնգրեսական:***

### ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ԵՐԵՎԱՆ-ԹԵՀՐԱՆ-ԵՐԵՎԱՆ ՉՎԵՐԹՆԵՐԸ

***Armenia Airways-ը սկսեց Երեւան-Թեհրան-Երեւան երթուղով կանոնավոր չվերթները:***

***Երեւան-Թեհրան-Երեւան երթուղով թռիչքները կիրականացվեն շաբաթական 3 չվերթ հաճախականությամբ՝ յուրաքանչյուր երկուշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերին, իսկ հունիսի 24-ից՝ ամեն օր:***

## ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐՀԻ 9-ՐԴ ՉԵՄՊԻՈՆ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ԿԴԱՌՆԱՐ 90 ՏԱՐԵԿԱՆ

*Հունիսի 17-ին շախմատի աշխարհի 9-րդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանը կդառնար 90 տարեկան: Հիշեցնենք, որ Տիգրան Պետրոսյանը աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճել է 1963 թվականին, 1966 թվականին՝ պաշտպանել կոչումը:*

«Երկաթե Տիգրանը» Միջազգային կարգի գրոսմայստեր էր (1952), ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ (1960), շախմատային տեսաբան եւ վերլուծաբան, «Շախմատային Մոսկվա» ամսագրի խմբագիր (1963-1966), «64» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր (1968-1977), փիլիսոփայական գիտությունների թեկնածու:

Տիգրան Պետրոսյանը շախմատով սկսել է զբաղվել 1940-ական թվականներից, թբիլիսյան Պիոներների պալատում, որտեղ իր վարպետությունը կատարելագործել է Ա.Էբրալիձեի գլխավորությամբ: Առաջին հաջողություններն արձանագրել է Համամիութենական պատանեկան առաջնություններում: Մոսկվա տեղափոխվելուց հետո հիանալի արդյունքների է հասել: 1962 թվականին, հաղթելով հավակնորդների մրցաշարում, Տիգրան Պետրոսյանն իրավունք է ստացել Մ.Բոտվիննիկի հետ վիճարկել աշխարհի չեմպիոնի կոչումը: Բոտվիննիկին Պետրոսյանը հաղթել է 1963 թվականին եւ նվաճել աշխարհի չեմպիոնի կոչումը: 1966 թվականին Պետրոսյանը պաշտպանել է շախմատի աշխարհի չեմպիոնի կոչումը՝ հաղթելով Սպասկուն: 1969 թվականին շախմատի աշխարհի առաջնության ժամանակ պարտվել է նույն Սպասկուն: 1971-1980 թվականներին շարունակել է պայքարը աշխարհի չեմպիոնի կոչման համար: ԽՍՀՄ հավաքականի կազմում 9 անգամ հաղթել է շախմատի օլիմպիադաներում:

1984 թվականից Երեւանի շախմատի տունը կրում է շախմատի աշխարհի 9-րդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանի անունը: Փարիզում գործում է Տիգրան Պետրոսյանի անվան ակումբ, իսկ ծննդավայր՝ Թբիլիսիում, սովորող երիտասարդների պալատում գործում է «Նոնա-Տիգրան-Նանա» 



շախմատային ակումբը՝ պալատի շախմատի խմբակի ամենաակնառու ներկայացուցիչների՝ Նոնա Գափրինդաշվիլու, Տիգրան Պետրոսյանի եւ Նանա Ալեքսանդրիայի անունով:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՀՈՒՆԻՍ



***22.06.2019թ. Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Խոր Վիրապից***

301 թվականին Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրն է, որը սկիզբ դարձավ հայոց մեծ դարձի: Այն Հայ Եկեղեցու մեծ տոներից է, որը հիշատակվում է Սբ. Հռիփսիմյանց եւ Սբ. Գայանյանց տոներին հաջորդող շաբաթ օրը: Տոնական այդ օրը բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ պատարագ:

***23.06.2019թ. Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի***

Հայոց եկեղեցու մեծ տոներից է Սբ. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Կաթողիկե Սուրբ Էջմիածնի հիմնադրման տոնը: Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը նշվում է Սուրբ Զատիկից 64 օր հետո կամ Հոգեգալստյան կիրակիին հաջորդող երկրորդ կիրակի օրը: Տոնի օրը մատուցվում է Սուրբ պատարագ:

***24.06.2019թ. Բեթղեհեմի մանուկների, Ակակիոս վկայի, Մովկիմա քահանայի եւ Կոտրիատիոս զինվորի հիշատակության օր***

***25.06.2019թ. Հիշատակ Սուրբ Նունե եւ Սուրբ Մանե կույսերի***

***27.06.2019թ. Սուրբ Իսահակ եւ Սբ. Հովսեփ իշխանների, Սբ. Սարգիս եւ Սբ. Բագոս վկաների հիշատակության օր***

## ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐ

### ԲԱԹՈՒՄԻՆ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԲԱՑԵՑ ԾՈՎԱՅԻՆ ՍԵԶՈՆԸ



***Բաթումիում պաշտոնապես տրվել է ծովային զբոսաշրջային սեզոնի մեկնարկը:***

Սեզոնի բացման առիթով կազմակերպված տոնական միջոցառումները մեկնարկեցին հունիսի 15-ին, ծովափին տեղի են ունեցել՝ «Ամառը սկսում է այստեղ» խորագրով համերգներ ու ներկայացումներ:

Աջարիայի ծովափնյա շրջաններում արդեն ծառայության է անցել 250 փրկարար: Այս տարվանից Աջարիայի ափերին կծառայի 20 աղջիկ փրկարար: Բացի այդ, այս տարվանից ծովում խեղդվողներին փրկելու համար կկիրառվեն նաեւ թռչող սարքեր:

## ՏՐԱՆՍՊՈՐՏ



### ԼԱՐՍԻ ԱՆՑԱԿԵՏԸ ԲԱՑ Է

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության ճանապարհային դեպարտամենտը, Լարսի անցակետ տանող ճանապարհը, որտեղ հարակից տարածքում, «Լոմիսոբա» ազգային տոնի անցկացման կապակցությամբ, սահմանվել էին առանձին սահմանափակումներ, ներկայում լրիվությամբ բաց է երթեւեկության համար:

## ՍՊՈՐՏ

### ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԽԱՂԵՐԸ

***Բելոռուսի մայրաքաղաք Մինսկում մեկնարկեցին Եվրոպական խաղերը: Խաղերի բացման հանդիսավոր արարողությունը կայացավ Մինսկի «Դինամո» մարզադաշտում: Արարողությանը մասնակցեցին մոտ 6000 մարզիկներ՝ 50 երկրներից: Մասնակիցների թվում են Վրաստանի եւ Հայաստանի ներկայացուցիչները:***




Հունիսի 21-30-ը անցկացվելիք խաղերի ընթացքում խաղարկվելու է 199 մեդալների հավաքածու՝ 15 մարզաձեւերում, որոնցից 7-ը Տոկիոյի Օլիմպիական խաղերի համար ուղեգրեր կավորում են ապահովում:

Եվրոպական խաղերն անցկացվում են 4 տարին մեկ անգամ եւ կազմակերպվում են Եվրոպական օլիմպիական կոմիտեի կողմից:

Վրաստանի պատիվը 10 մարզաձեւերում պաշտպանելու է 61 մարզիկ, իսկ Հայաստանը Եվրոպական երկրորդ խաղերին ներկայացված է 37 մարզիկով՝ 9 մարզաձեւերում:

### ՁԵՌՔԻ ԳՆԴԱԿ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

***Վրաստանի հավաքականը հաղթանակով ավարտեց Թբիլիսիում եզրագիծը հատած IHF երիտասարդ պետությունների ձեռքի գնդակի միջազգային մրցաշարը:***

Մրցումների եզրափակիչում Նիկոլ Մաքսիմովիչի եւ Բեքար Օրջոնիկիձեի սաները 31:21 հաշվով համոզիչ հաղթանակ տարան Կուբայի հավաքականի նկատմամբ: Վրաց մարզիկները լավագույն ցուցանիշն ապահովեցին մրցաշարին մասնակից եվրոպական վեց երկրների թվում եւ դրանով իսկ ստացան 2022 թվականին Եվրոպայի առաջնության երկրորդ ընտրական փուլում Պլեյօֆում հանդես գալու ուղեգիրը:

Մրցաշարի բրոնզե մեդալակիր դարձավ Բուլղարիայի հավաքականը, որը 47:31 հաշվով պարտության մատնեց Մեծ Բրիտանիայի հավաքականին:

Նշենք, որ IHF երիտասարդ պետությունների միջազգային մրցաշարը ձեռքի գնդակի միջազգային ֆեդերացիայի ներքո անցկացվում է երրորդ անգամ: Մրցաշարի նպատակը՝ ձեռքի գնդակ մարզաձեւի զարգացումն ու ժողովրդականացումն է այն երկրներում, որտեղ այն զանգվածային տարածում չունի:

### ՖՈՒՏԲՈԼ. ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ՝ ՑՈՒՑԱԴՐԱԾ ԽԱՂԻ ՈՐԱԿԻ ՀԱՅԵԼԻ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը: Ըստ նոր դասակարգման, Վրաստանի թիմը, սեփական հարկի տակ 3:0 հաշվով հաղթելով Ջիբլարթարին եւ 1:5 հաշվով պարտվելով Դանիայի հավաքականի հետ հանդիպումներում, պահպանել է նախկին դիրքը եւ կրկին զբաղեցնում է 94-րդ հորիզոնականը:

Նախընտրական փուլի վերջին երկու հանդիպումներում հաղթանակած Հայաստանի հավաքականը (3:0՝ Լյուքսեմբուրգին, 3:2՝ Հունաստանին) առաջադիմել է 9 հորիզոնականով եւ հանգրվանել 97-րդ տեղում:

Առաջին եռյակը չի փոփոխվել, աղյուսակը շարունակում է գլխավորել Բելգիայի հավաքականը, երկրորդ տեղում Ֆրանսիան է, երրորդում՝ Բրազիլիան:

Լավագույն տասնյակում են նաեւ Անգլիան, Պորտուգալիան, Խորվաթիան, Իսպանիան, Ուրուգվայը, Շվեյցարիան եւ Դանիան:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Նորվեգիայի մայրաքաղաքը: 8.Սեփական աչքով տեսած, վկա: 10.Կրպակ, վաճառանոց: 11.Կրակի աստվածը հնդկական դիցարանում: 12.Ռուս գրող Վադիմ ...: 15.Վրաստանի ԽՍՀ ժողովրդական արտիստուհի ... Բերոյան: 17.Տպագիր գործի առանձին լույս տեսնող մասերից յուրաքանչյուրը: 20.«Դլե ...»: 23.Ուժեղ սեռ: 26.Տնազուրկ, անօթեւան: 27.Ծերերի օթեւան: 28.Ռուսական ուղեծրային կայան: 29.Հագուստ, սպիտակեղեն: 32.Գետ Լատվիայում: 34.Անձնական դերանուն: 36.Վրացի բանաստեղծ, պետական մրցանակի դափնեկիր՝ ... Աբրամիշվիլի: 38.Կերակրում: 39.Սարի կատար: 42.Իմացական կարողություն, գաղափար: 44.Տարբեր տեսակի: 46.Պորտաբույծ: 49.Անիաճո: 52.Ամուսնու եղբայրը: 53.Փշոտ բույս: 54.Օդի (բրբ.): 55.Ռուսական էստրադայի վրացի երգչուհի ... Ղուրծկայա: 56.Տարվա եղանակ: 57.Մեքսիկայի ճարտարապետության Ազգային Ակադեմիայի հիմնադիր՝ Մարիո ... Դարկվի: 58.Հատակ, նաեւ՝ ճակնդեղ (բրբ.):

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ծառատեսակ: 2.Հայոց մայրաքաղաքներից: 3.Քուրջ, հագուստ: 4.Վրաց պրոֆեսիոնալ բասկետբոլիստ ... Փաչուլիա: 5.Վրացական մարզական թերթ: 7.Գրիմմ եղբայրներ՝ «... աղջիկը»: 9.Տեսողությունից զուրկ: 12.Նալ: 13.Ըստ ավանդույթի՝ Հին Հռոմի երկրորդ արքան ... Պոմպիլիոս: 14.Ձայնավոր ունեցող հնչյուն: 16.Աղը պակաս: 18.Կրկես: 19.Դերձակի «զբաղմունք»: 21.Համ չունեցող: 22.Քաղաք Լիբանանում: 24.Տոկունություն, համառություն: 25.Դարձյալ, կրկին: 30.Վրաց դերասանուհի՝ ... Բադուրաշվիլի: 31.Վրաստանը նախկինում: 33.Մարջ: 35.Այս, այս նույն: 37.Մոնղոլական տիտղոս: 40.Պետություն Աֆրիկայում: 41.Կսմիթավոր երաժշտական գործիք: 42.Բաց կապույտ: 43.Ալբանիայի մայրաքաղաքը: 45.Կուսակրոն քահանա: 46.Այժմյան, ժամանակակից: 47.XVIII դարի ծովային ռազմանավ: 48.Գրական ժանր: 50.Չեփված: 51.Բազմությանն ուղղված խոսք: 52.Չափից ավելի շոգ:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Օդեսա: 4.Ոգելից: 11.Ռուսթավի: 12.Ակումբ: 14.Վրաստան: 15.Նոկիա: 17.Քուռ: 18.Ամյան: 21.Քնար: 22.Սիրիացի: 25.Բիբ: 26.Խարտյաշ: 27.Ելարան: 30.Պաթոս: 31.Թո: 32.Նոբել: 35.Ջոր: 38.Գիզա: 39.Բովարի: 40.Եթե: 41.Ատլաս: 42.Յան: 43.Շիկո: 44.Լաս: 45.Գեն: 46.Ինդոս: 50.Արագ: 51.Ձա: 52.Երնեկ: 54.Ռեյկյավիկ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Դասական: 3.Սրածայր: 5.Գոհար: 6.Լրատու: 7.Ցցունք: 8.Դեբյուսի: 9.Եռանդ: 10.Ջիվանի: 13.Կա: 16.Իմաստուն: 19.Տիբեթ: 20.Մինաս: 22.Սի: 23.Մխիթարյան: 24.Սալբի: 28.Լոտոս: 29.Նորին: 30.Պլատոն: 33.Ոգեշնչել: 34.Եզակի: 35.Ջավար: 36.Որ: 37.Կենգուրու: 39.Բարորակ: 47.Դա: 48.Սա: 49.Մարկ: 53.Ով:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445